ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3-3

ք. Երևան « 8 » հունվարի 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Գևորգ Ստեփանյանը (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է դեռատիզացիոն ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10413000** (տաս միլիոն չորս հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի **/համաձայնագրի/** վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 6, 7-րդ չափաբաժնի մասով 0.5 տոկոսի չափով, 8, 9-րդ չափաբաժնի մասով 20 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,19 տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**Կատարող**
Երևանի քաղաքապետարան	Ա/Ձ Գևորգ Ստեփանյան
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Կոտայքի մարզ,1փ /տ19,Զովք
Կենտրոնական գանձապետարան	<<Այդի բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	ՀՀ11808009985600
	ՀՎՀՀ 89558434
Է. Կիրակոսյան ----------	Գ. Ստեփանյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » դեկտեմբերի 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
6	90921300/519	Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքում՝ 3000քմ, ամիսը 3 անգամ իրականացնել պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /լանիրատ, բրոմոդիալոն և այլ թունաքիմիկատներ/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Դեռատիզացիոն աշխատանքները կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով:	դրամ	500000	1	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան ք. Երևան Դ. Անհաղթի 11	նախընտրելի ժամկետ է համարվում Պայմանագիրը (Համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
7	90921300/522	Ծառայության նկարագիրը - Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010 թ. Թիվ 13-ն հրամանով հաստատված <<Կրծողների դեմ պայքարի սանիտարակ կանոնների և նորմերի >> : Պայքարը կազմակերպել մեխանիկական (թակարդներ, սոսնձե բռնիչներ) և քիմիական (ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն) մեթոդներով: Այլ պայմաններ – դեռատիզացիոն	դրամ	5000000	1	ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	նախընտրելի ժամկետ է համարվում Պայմանագիրը (Համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.

		աշխատանքները կատարվում են սպասարկողկազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով: Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիայով: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մասնավոր տնատիրությունների, ջրանցքների հարակից տարածքների մշակման հաճախականությունը՝ ամիսը 2 անգամ: Ծառայությունը պետք է մատուցվի 420000 քմ-ի համար:					
8	90671100/505	Գնման առարկա է հանդիսանում Արաբկիր վարչական շրջանի վարչական շենքի դեռատիզացիոն ծառայությունները: 1. Պայքար կրծողների դեմ, համաձայն << Առողջապահության նախարարության 16.07.2010թ. Թիվ 13-Ն հրամանով հաստատված «Կրծողների դեմ պայքարի սանիտարական կանոնների և նորմերի»: Կրծողազերծման աշխատանքներն իրականացնելուց առաջ սպասարկող կազմակերպությունը կատարում է տարածքի հետազոտություն, որի արդյունքում սանիտարատեխնիկական վիճակի բարելավման նպատակով պետք է տրվի առաջադրանքներ՝ կանխարգելիչ և ոչնչացման միջոցառումների իրականացման համար: Կազմակերպությունների հետազոտությունը նպատակաուղղվում է՝ • կրծողների հայտնաբերմանը, • դրանց բնակության պայմանների ուսումնասիրմանը, • խտության, տեղակայման առանձնահատկությունների, սերնդատվության բնութագրմանը, • դրանց դեմ պայքարի մարտավարության և ռազմավարության մշակմանը, • կրծողների միջոցով փոխանցվող վարակիչ	դրամ	183000	1	Արաբկիր վարչական շրջան	պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ

		հիվանդությունների կանխարգելմանը: Կրծողների առկայության վերաբերյալ հետազոտությունները պետք է կատարվեն օբյեկտի ողջ տարածքում՝ ամիսը երկու անգամ: Կրծողներով վարակված հասցեներում իրականացվում է կրծողների պարբերաբար՝ ըստ ժամանակացույցի (ամրագրված պայմանագրում) և ցուցումով ոչնչացում, երկարատև ազդող նյութերով, որոնք կանխում են դրանց տեղաշաժը (միգրացիան): Կրծողների թվաքանակի նվազեցման նպատակով իրականացվում են կրծողների ոչնչացման աշխատանքներ ողջ տարածքում, ինչպես նաև օժանդակ հրապարակներում: 2. Պայքարը կազմակերպել մեխանիկական /թակարդներ, սոսնձե բռնիչներ/ և քիմիական /ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն/ մեթոդներով: Շենքերում, որտեղ կա չփաթեթավորված սննդամթերք, պայքարի թունավոր միջոցներն պետք է օգտագործվի ծածկելու մեթոդով (կպչող կամ մեխանիկական եղանակով): Թունավորված հատիկավոր գրավչանյութերը չպետք է տեղադրվեն սննդամթերքին մոտ: Մանկական կազմակերպություններում կրծողների դեմ պայքարի քիմիական և ֆիզիկական եղանակների կիրառման ժամանակ պետք է պահպանվի անվտանգությունը՝ բացառելով երեխաների շփումն օգտագործվող նյութերի հետ: Վերոհիշյալ կազմակերպություններում միջոցառումներ իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետևյալ կանոնները՝ • չօգտագործել սուր ազդող թունավոր նյութեր ու փոշիներ, • գրավչանյութերը տեղադրել երեխաների համար անմատչելի հատուկ տարաներում, որտեղ կարող են մուտք գործել միայն կրծողները, • բացառել երեխաների շփումը կրծողների հետ, • բացառել կրծողների շփումը սննդամթերքի, դեղերի և այլ կենցաղային առարկաների հետ, • թունավոր գրավչանյութերը տեղադրել միայն ուղղահայաց մակերես ունեցող հատուկ					

		տարաներում: Գրավչանյութերի համարակալված տարաները ստորագրությամբ հանձնել պատվիրատուի կողմից լիազորված անձին: Կրծողների դիակները հավաքել և ոչնչացել: Կրծողների վերացման միջոցառումները համարվում են անբավարար, եթե կրծողներից ազատված տարածք հայտարարված շինությունում հայտնաբերվում են դրանց կենսագործունեության թարմ նշաններ: 3. Այլ պայմաններ-դեռատիզացիոն աշխատանքները կատարվում են սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով: 4. Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիաներով: **Ընդհանուր քանակը՝ 1600 քմ** Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար: Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը: Կատարողը պետք է ծառայությունները մատուցի ամիսը 2 անգամ բոլոր հասցեներում: Կատարողը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021թ. ներառյալ/՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում: Կից ներկայացվում է տեղեկանք 2021 թվականի ընթացքում Երևանի բյուջեի միջոցների հաշվին Արաբկիր վարչական շրջանում դեռատիզացիոն ծառայությունների մատուցման հասցեների և ծավալների վերաբերյալ:					
9	90671100/506	Գնման առարկա է հանդիսանում Արաբկիր վարչական շրջանի ենթակայության թվով 13 մանկապարտեզների, 2 գրադարանների, 2 երաժշտական դպրոցների, 4 մարզադպրոցների, 13 սեփական տնտիրությունների և կառավարման մարմին չունեցող թվով 34 շենքերի	դրամ	4730000	1	Արաբկիր վարչական շրջան	պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ

		դեռատիզացիոն ծառայությունները: 1. Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. Թիվ 13-Ն հրամանով հաստատված «Կրծողների դեմ պայքարի սանիտարական կանոնների և նորմերի»: Կրծողազերծման աշխատանքներն իրականացնելուց առաջ սպասարկող կազմակերպությունը կատարում է տարածքի հետազոտություն, որի արդյունքում սանիտարատեխնիկական վիճակի բարելավման նպատակով պետք է տրվի առաջադրանքներ՝ կանխարգելիչ և ոչնչացման միջոցառումների իրականացման համար: Կազմակերպությունների հետազոտությունը նպատակաուղղվում է՝ • կրծողների հայտնաբերմանը, • դրանց բնակության պայմանների ուսումնասիրմանը, • խտության, տեղակայման առանձնահատկությունների, սերնդատվության բնութագրմանը, • դրանց դեմ պայքարի մարտավարության և ռազմավարության մշակմանը, • կրծողների միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը: Կրծողների առկայության վերաբերյալ հետազոտությունները պետք է կատարվեն օբյեկտի ողջ տարածքում՝ ամիսը երկու անգամ: Կրծողներով վարակված հասցեներում իրականացվում է կրծողների պարբերաբար՝ ըստ ժամանակացույցի (ամրագրված պայմանագրում) և ցուցումով ոչնչացում, երկարատև ազդող նյութերով, որոնք կանխում են դրանց տեղաշաժը (միգրացիան): Կրծողների թվաքանակի նվազեցման նպատակով իրականացվում են կրծողների ոչնչացման աշխատանքներ ողջ տարածքում, ինչպես նաև օժանդակ հրապարակներում: 2. Պայքարը կազմակերպել մեխանիկական /թակարդներ, սոսնձե բռնիչներ/ և քիմիական /ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն/ մեթոդներով:					

					լարումները: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 1. Ներածություն դիմադրությունների մասին Դիմադրությունները և դրանց միացումները էլեկտրական սխեմաներում Էլեկտրական դիմադրության գաղափարը Դիմադրությունների գունային նշանակումները 2. Էլեկտրական հոսանքի աղբյուրներ Գալվանական տարրեր Էլեկտրական հոսանքի աղբյուրներ 3. Էլեկտրական լարում Լարման չափումը Էլեկտրական դաշտի գաղափարը Էլեկտրական դաշտի ուժգնությունը Էլեկտրական դաշտի ներուժ Էլեկտրական լարումներ Էլեկտրական հոսանքի ազդեցությունները Էլեկտրական հոսանքի ջերմային ազդեցությունը Էլեկտրական հոսանքի քիմիական ազդեցությունը Էլեկտրական հոսանքի մագնիսական ազդեցությունը Էլեկտրական հոսանքի ֆիզիոլոգիական ազդեցությունը Էլեկտրական հոսանքի չափումները Էլեկտրական հոսանքի ուժգնությունը Էլեկտրական հոսանքի ուժգնության չափումը Էլեկտրական հոսանքի ուժգնության չափիչ գործիքներ Էլեկտրական հոսանքի ուժգնության չափումներ

		Ընդհանուր քանակը՝ 41400 քմ Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար: Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը: Կատարողը պետք է ծառայությունները մատուցի ամիսը 2 անգամ բոլոր հասցեներում: Կատարողը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021թ. ներառյալ/՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում: Կից ներկայացվում է տեղեկանք 2021 թվականի ընթացքում Երևանի բյուջեի միջոցների հաշվին Արաբկիր վարչական շրջանում դեռատիզացիոն ծառայությունների մատուցման հասցեների և ծավալների վերաբերյալ:					

<u>8-րդ և 9-րդ չափաբաժնի համար</u>

2021 թվականի ընթացքում Երևանի բյուջեի միջոցների հաշվին **Արաբկիր վարչական շրջանում** դեռատիզացիոն ծառայությունների մատուցման հասցեների և ծավալների վերաբերյալ

h/h	Ծառայության իրականացման հասցեն	Չափման միավորը	Մակերեսը	Մշակման հաճախականությունը
դեռատիզացիոն ծառայություններ				
1	Արաբկիրի վարչական շենք Ն.Զարյան 27	քմ	1600	ամսական 2 անգամ
2	«Երևանի թիվ 22 մանկապարտեզ» ՀՈԱԿ Գրիբոյեդով 2/2	քմ	1600	ամսական 2 անգամ

3	«Երևանի թիվ 23 մանկապարտեզ» ՀՈԱԿ Վրացական 19	քմ	1600	ամսական 2 անգամ
4	«Երևանի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ Քանաքեռ ՀԷԿ /Բանավան/	քմ	1500	ամսական 2 անգամ
5	«Երևանի թիվ 25 մանկապարտեզ» ՀՈԱԿ Շիրվանզադե 5/1	քմ	1600	ամսական 2 անգամ
6	«Երևանի թիվ 26 մանկապարտեզ» ՀՈԱԿ Փափազյան 8	քմ	1500	ամսական 2 անգամ
7	«Երևանի թիվ 27 մանկապարտեզ» ՀՈԱԿ Կիևյան 7	քմ	1000	ամսական 2 անգամ
8	«Երևանի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ Կիևյան 5	քմ	1000	ամսական 2 անգամ
9	«Երևանի թիվ 29 մանկապարտեզ» ՀՈԱԿ Կոմիտաս 30	քմ	1000	ամսական 2 անգամ
10	«Երևանի թիվ 30 մանկապարտեզ» ՀՈԱԿ Կոմիտաս 58	քմ	1600	ամսական 2 անգամ
11	«Երևանի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ Գր.Արծրունի 57	քմ	1600	ամսական 2 անգամ
12	«Երևանի թիվ 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ Գր.Արծրունի 25	քմ	1600	ամսական 2 անգամ
13	«Երևանի թիվ 33 մանկապարտեզ» ՀՈԱԿ Ա.Խաչատրյան 28/1	քմ	1600	ամսական 2 անգամ
14	«Երևանի թիվ 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ Քանաքեռ շրջ.թունել	քմ	1000	ամսական 2 անգամ
15	«Երևանի թիվ 5 գրադարան» ՀՈԱԿ Սունդուկյան 26	քմ	100	ամսական 2 անգամ
16	«Երևանի թիվ 6 գրադարան» ՀՈԱԿ Քանաքեռ ՀԷԿ 4/1	քմ	100	ամսական 2 անգամ
17	Սեփական տնատիրություններ /հասցեները կցվում են/	քմ	17400	ամսական 2 անգամ
18	Կառավարման մարմին չունեցող շենքեր /հասցեները կցվում են/	քմ	2000	ամսական 2 անգամ

19	«Կ.Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	քմ	1000	ամսական 2 անգամ
20	«Ա.Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	քմ	500	ամսական 2 անգամ
21	«Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատ. մարզադպրոց» ՀՈԱԿ	քմ	600	ամսական 2 անգամ
22	«Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց» ՀՈԱԿ	քմ	500	ամսական 2 անգամ
23	«Ա.Գրիգորյանի անվամ սուսերամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ	քմ	500	ամսական 2 անգամ
24	«Արաբկիրի շախմատի մանկապատանեկան դպրոց» ՀՈԱԿ	քմ	500	ամսական 2 անգամ
Ընդամենը		քմ	43000	

Արաբկիր վարչական շրջանի կառավարման մարմին չունեցող շենքեր

h/h	Հասցեներ	քմ
1	Ա.Խաչատրյան 22 շենք	70
2	Այգեձոր 1-ին նրբ. 22 շենք	50
3	Այգեձոր 72 շենք	50
4	Այգեձոր 76 շենք	50
5	Արծրունի 10 շենք	50
6	Արողության 38 շենք	50
7	Բաբայան 38 շենք	50
8	Բաղրամյան 77 շենք	50

9	Գյուլբենկյան 2 շենք	50
10	Գյուլբենկյան 36 շենք	50
11	Գրիբոյեդով 19 շենք	70
12	Կասյան 10 շենք	60
13	Կոմիտաս 23/1 շենք	100
14	Հ.Էմինի 82 շենք	90
15	Հ.Էմինի 16 շենք	30
16	Օրբելի 18 շենք	100
17	Բաղրամյան 47 շենք	70
18	Օրբելի 33 շենք	50
19	Սոսե 2/2 շենք	30
20	Սունդուկյան 3ա շենք	100
21	Վաղարշյան 3 շենք	80
22	Օրբելի 47 շենք	50
23	Գրիբոյեդով 1-ին նրբ. 11 շենք	40
24	Շիրվանզադե 3-րդ նրբ. 18 շենք	80
25	Կիևյան 8/4 շենք	40
26	Կոմիտաս 51 շենք	40
27	Քոչար 13 շենք	50
28	Բաբայան 12 շենք	60
29	Բաբայան 14 շենք	60
30	Բաբայան 16 շենք	80
31	Ա.Խաչատրյան 11 շենք	50
32	Փափազյան 22ա շենք	50
33	Օրբելի 63/1 շենք	50
34	Վաղարշյան 21/1 շենք	50
	Ընդամենը	2000

Արաբկիր վարչական շրջանի սեփական տնատիրությունը սպասարկող տեղամասերը և դրանց տարածքներում գտնվող տների հասցեները

հ/հ	հասցեներ	
1	Այգեձոր	1-65, 4-66ա
2	Այգեձոր փող. 1-ին նրբ.	1-19, 2-66
3	Պռոշյան	2-42
4	Մարշալ Բաղրամյան	35-47
5	Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ նրբ.	1-19
6	Մարշալ Բաղրամյան	53, 55, 57, 59, 59Ա, 59Բ, 61, 65, 67, 75/1, 77, 59Գ-2-րդ մուտք
7	Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ նրբ.	4, 6, 8, 8Ա, 10, 12, 14
8	Մարշալ Բաղրամյան պող. 3-րդ նրբ.	1-11, 3/1
9	Օրբելի	1, 3, 5, 7, 9, 11, 13, 15, 17, 18Ա, 19, 21, 27, 29, 29Ա, 31, 37, 39, 51, 53, 55, 55Ա, 57, 61
10	Կիևյան	20/3
11	Կիևյան փող. 2-րդ նրբ.	3, 8, 10-20, 23, 25, 27, 30, 31, 32
12	Դարաբաղ	39, 40, 41, 42, 43, 73, 73Ա, 73/1, 74, 121Ա
13	Երզնկյան	14, 16, 18, 20, 22, 24, 25, 26, 27, 27ա, 28, 31, 32, 33, 34, 36, 38, 39, 39Բ, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 47Ա, 48, 49, 50, 51, 51Ա, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 69, 71, 73, 75, 77, 79, 81
14	Գուլակյան	4-109
15	Գյուլբենկյան	5-20
16	Գյուլբենկյան փող. 1-ին նրբ.	3-9
17	Մարշալ Բաղրամյան	54
18	Մարշալ Բաղրամյան պող. 1-ին նրբ.	1-3, 7-15, 30/2
19	Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ նրբ.	2
20	Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ փակ.	2-19

21	Սոսե	9-11, 15-78
22	Աղբյուր Սերոբ	22-44 (միայն զույգ համարները), 5/1
23	Սոսեի փող. 2-րդ նրբ.	1-3
24	Սոսեի փող. – Ձոր	52ա, 56
25	Անտառային	186
26	Խնկո Ապեր	1-20
27	Ավետիսյան	9-65, 12-64/1, 112, 116, 118, 120
28	Սունդուկյան	4-64, 69, 98
29	Հր. Քոչար	4/50-6/58
30	Համբարձումյան	5, 23-121
31	Արծրունի	4-24
32	Կասյան	2/1, 2/2
33	Մարշալ Բաղրամյան պող. 4-րդ նրբ.	7-15, 12-40
34	Գյուլբենկյան	23-27, 28
35	Քեռի	1-27, 31-101, 2-56, 62
36	Բարբյուս	1-61, 2-52
37	Բարբյուս փող. 1-ին փկղ.	2, 2Ա
38	Սևաստոպոլյան	2-60, 3-63, 67
39	Սեպուհ	1-29, 2-20
40	Կիևյան	15Ա, 20/3
41	Կիևյան փող. 1-ին նրբ.	1-15, 2-4
42	Նիկոլ Դուման	2-20, 24-52, 62, 5-47, 51
43	Կալենց	4-18, 22, 11-47
44	Արաբկիրի 38-րդ փող.	1-72, 2-10
45	Կոմիտաս	զույգեր – 19/6
46	Բակունց	5-59, 18-74
47	Խաչատրյան	10/1-20/4, 18/3, 5-25
48	Ռաֆֆի	5-33, 37-65, 6-30, 36-62
49	Մանուշյան	2-34, 36-50, 7-35, 51-71
50	Հ. Էմին	1-21 (միայն կենտ համարները)
51	Գյուլբենկյան	71, 73, 38/2, 38/2Ա, 38/2Բ, 38/2Դ, 43/2
52	Սահյան (Կովկասյան)	1-87, 2-66, 72, 88

53	Սևքարեցի Սաքո	1-57, 2-56
54	Թավրիզյան	1-93, 2-58
55	Հ. Էմին	23-87, 28, 78
56	Հ. Էմին	9-124, 131/1, 131/2, 131/3, 135/1, 135/2, 135/3
57	Հ. Էմինի փող. 1-ին նրբ.	1-29 (միայն կենտ համարները)
58	Սևքարեցի Սաքո	59-92
59	Սահյան (Կովկասյան)	68-114 (միայն զույգ համարները)
60	Փափազյան փող. 2-րդ նրբ.	59-133
61	Արղության	1-36
62	Արղության փող. 2-րդ նրբ.	1, 3/1, 3/2, 3/3
63	Մալխասյանց	14, 16, 17, 19, 21
64	Մալխասյանց փող. 1-ին նրբ.	5-9/4 (միայն կենտ համարները)
65	Գրիբոյեդով փող. 4-րդ նրբ.	2-14, 34, 34/1, 36
66	Մամիկոնյաց	56/10
67	Մամիկոնյանց փող. 1-ին նրբ.	1-10
68	Խաչատրյան (Ռաֆֆու)	77-108, 91/1, 112, 114, 121, 123
69	Խաչատրյան փող. 1-ին նրբ.	1-23 (միայն կենտ համարները), 20, 84, 86, 96, 98, 100
70	Վրացական	21
71	Հ. Էմին	126-148 (միայն զույգ համարները)
72	Մալխասյանց	11, 13
73	Մանուշյան	66-98, 77-113
74	Կոմիտաս	23/2, 23/3, 23/4, 23/5, 25/2, 25/3, 25/4, 25/5, 25/6, 37/1
75	Բակունց	83, 85
76	Ռիգա	126, 126Ա, 126Բ:
77	Այգեկցի	77-103
78	Ղափանցյան	5, 5Ա, 5Բ, 5Գ, 5/7, 5/11, 16/2, 16/3, 16/4, 20/2, 30, 37/1:
79	Քանաքեռ ՀԷԿ՝ Բանավան	5Բ, 52, 52/1
80	Ադոնց	5Բ, 5/10, 12, 14, 16/2, 16/3
81	Զարյան	2-106

82	Զարյան փող. 1-ին նրբ.	1, 3, 5, 7, 9
83	Արաբկիր 43-րդ փող.	1-53
84	Կոմիտաս	32/2, 32/3, 32/6, 36/5, 36/7, 36/8
85	Կոմիտաս պող. 1-ին նրբ.	6, 6Ա, 11, 13, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 26
86	Արծրունի	68-78 (միայն զույգ համարները)
87	Գրիբոյեդով	28-40 (միայն զույգ համարները)
88	Գրիբոյեդով փող. 1-ին նրբ.	12, 14
89	Վրացական փող. 2-րդ նրբ.	2, 4, 6, 8, 10, 12
90	Հր. Քոչար	139-171, 192
91	Ռիգա	2, 3, 4, 5, 8, 10, 12, 14
92	Տիգրանյան	19/3
93	Բուդաղյան	3-7
94	Արաբկիր 33-րդ փող.	1-17Ա (միայն կենտ համարները)
95	Արաբկիր 35-րդ փող.	1-24
96	Արաբկիր 37-րդ փող.	3-12
97	Արաբկիր 39-րդ փող.	1-30, 17/1
98	Արաբկիր 41-րդ փող.	1-13
99	Արաբկիր 45-րդ փող.	1-19Գ
100	Արաբկիր 47-րդ փող.	1-23
101	Արաբկիր 49-րդ փող.	4-16Դ
102	Արաբկիր 51-րդ փող.	4-16Դ
103	Արաբկիր 53-րդ փող.	1-28Ա
104	Հյուսիսային ճառագայթ	17 շենքի հ.հ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 բնակարաններ
105	Հր. Քոչարի փող. 1-ին նրբ.	4-9
106	Հր. Քոչար	188-202 (միայն զույգ համարները):
107	Ռիգայի փող. 1-ին նրբ.	1-11
108	Արաբկիր 17-րդ փող.	1-23/1
109	Արաբկիր 19-րդ փող.	7-27
110	Արաբկիր 21-րդ փող.	7-32
111	Արաբկիր 23-րդ փող.	1-30/2
112	Արաբկիր 25-րդ փող.	4-25

113	Արաբկիր 27-րդ փող.	1-20/1
114	Արաբկիր 29-րդ փող.	1-53/1
115	Արաբկիր 29-րդ փող. 1-ին նրբ.	2-8 (միայն զույգ համարները)
116	Արաբկիր 29-րդ փող. 2-րդ նրբ.	1-11
117	Արաբկիր 29-րդ փող. փակ.	2/1-8/1
118	Բաբայան	7/3

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Գևորգ Ստեփանյան
Կոտայքի մարզ,1փ /տ19,Զովք
<<Այդի բանկ>> ՓԲԸ
ՀՀ11808009985600
ՀՎՀՀ 89558434

Գ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.2
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «08» հունվարի 2021թ.

ԱՁ Գևորգ Ստեփանյանը (անձնագիր AT0533842, 03.08.2020թ 019-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետևանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ԱՁ Գևորգ Ստեփանյան

2220, Կոտայքի մարզ, 1փ / տ 19, Զովք

<<Այդի բանկ>> ՓԲԸ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ 66558434

Կ.Տ

08/01/2021

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ ԱՁ Գևորգ Ստեփանյան

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<Այդի բանկ>> ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 11808009985600

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 89558434

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 10.413.000 (տաս միլիոն չորս հարյուր տասներեք հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝	"___" ___ 20___թ.

* *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «08» հունվարի 2021թ.

ԱՁ Գևորգ Ստեփանյանը (անձնագիր AT0533842, 03.08.2020թ 019-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.3 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.4 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.5 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.6 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով

ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ԱՁ Գևորգ Ստեփանյան

2220, Կոտայքի մարզ, 1փ / տ 19, Զովք

<<Այդի բանկ>> ՓԲԸ

Հ/Հ 11808009985600

ՀՎՀՀ 89558434

Գևորգ Ստեփանյան

Կ.Տ

08/01/2021

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ ԱՁ Գևորգ Ստեփանյան

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<Այդի բանկ>> ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 11808009985600

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 89558434

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1.041.300 (մեկ միլիոն քառասունմեկ հազար երեք հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/3

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝	"___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*